



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ԾԽԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Երեքշաբթի, 28 Ապրիլի երեկոյեան ժամը 8ին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահը հիւրընկալեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Ազգային Վարչութեան եւ ծխական շրջաններու Ազգային Երեսփոխաններու ու հոգաբարձական կազմերու այս տարեշրջանի հերթական երրորդ հանդիպումը: Արդարեւ, խորհրդակցական այս հանդիպումները գեղեցիկ ասանդուլութիւն մը դարձած են Թեմիս ժողովականութեան համար ու առիթ կ'ընծայեն միասնաբար քննարկելու հասարակաց հարցեր, ծրագիրներ ու լուծումներ որոնելու բոլորը մտահոգող հարցերու:

Հաւաքական աղօթքէ ետք, ողջոյնի խօսք արտասանեց Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան. ան առաջին հերթին ժողովականութեան անունով ցաւակցական խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին՝ Տիրամայր Մարի Մարտիրոսեանի մահուան առիթով: Տեղի ունեցաւ յիշատակի աղօթք: Ապա, Տոքթ. Յակոբեան լուսաբանութիւն տուաւ հանդիպումին քննարկելի հարցերուն մասին, նշելով, որ ժողովս պիտի լսէ շրջաններու ներկայացուցիչներուն զեկուցումները: Ան ողջունեց բոլոր ներկաները եւ յատկապէս Նորթ Հոլիվուտի նորակազմ շրջանի ծխական յանձնախումբի ներկայացուցիչները, որոնք առաջին անգամ ըլլալով մասնակցութիւն կը բերէին նման հաւաքի մը:

Յաջորդաբար խօսք առին Թեմիս ծխական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետներն ու ներկայացուցիչները: Անոնք ժողովականները տեղեակ պահեցին իրենց նորագոյն իրագործումներուն ու անմիջական ապագայի ծրագիրներուն: Յատուկ կարեւորութեամբ վեր առնուեցաւ ժողովուրդին ու յատկապէս երիտասարդութեան հետ մեր եկեղեցիներու կապերուն սերտացման ու ամրապնդման կարեւորութիւնը, այդ նպատակով որդեգրուած ու որդեգրելի միջոցները:

Հանդիպումի երկրորդ բաժինով, Ազգ. Վարչութեան ատենապետը ներկայացուց որոշ թելադրանքներ ու բացատրութիւններ, որոնք կը նպաստեն աշխատանքներու հեզասահ ընթացքին ու կանոնադրային տրամադրութեանց կիրարկման:

Հանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան ողջունեց այս հանդիպումին կատարուած ներդրումները, նշելով, որ նման հանդիպումներ կը ծառայեն իրագործումներու փոխադարձ ծանօթացման ու հետեւաբար՝ հաւաքական հարստացումի: Ան վեր առաւ հովիւներուն ու ժողովականներուն գնահատելի դերակատարութիւնն ու նուիրեալ աշխատանքը՝ ի սպաս մեր եկեղեցիներուն ու հաւաքական կեանքին, ապա, կարեւորութեամբ շեշտեց, որ այս տարի, մեր Թեմին մէջ եւս յատուկ ձեռնարկներով ու հանդիսութիւններով պիտի նշուի Երիտասարդութեան Տարին, հռչակուած՝ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Ան կոչ ուղղեց, որ ծխական շրջաններուն մէջ այս տարին արժեւորուի գործնապէս ու մեր Երիտասարդութիւնը իր արժանի տեղը ունենայ մեր գուրգուրանքին մէջ:

Առաջնորդ Սրբազանը իր խօսքը եզրափակեց յորդորելով, որ մեր ժողովականութիւնը իր աշխատանքը յառաջ տանի կազմակերպուած ու աշխոյժ կերպով:

Հանդիպումը վերջ գտաւ փակման աղօթքով, ժամը 9:30ին:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH BOARDS OF TRUSTEES AND DELEGATES

By the invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, on the evening of Tuesday ,April 28th, 2009, Boards of Trustees and Delegates of Prelacy Churches and Parishes gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall to discuss the general activities as well as the concerns of their respective parishes. The meeting was the third of its kind for the 2008-2009 year.

Following the opening prayer, Executive Council Chair Dr. Garo Agopian welcomed the guests and on their behalf conveyed his condolences to the Prelate on the loss of Diramayr Marie Mardirossian, which was followed by a prayer in her memory. Dr. Agopian went on to inform the guests of the issues that were to be discussed during the meeting. He welcomed all the representatives and especially the parish council of the newly established North Hollywood parish who were participating in this meeting for the first time.

Subsequently, one by one the Chairmen or parish representatives were invited to report on the past, present, and future activities of their churches. Special attention was given by all to the importance of strengthening ties with the youth.

Following the reports by each parish, Dr. Agopian presented suggestions to ease concerns and allow for progress within our churches.

In his closing remarks the Prelate welcomed the input of the representatives, stating that such discussions and exchange of ideas and suggestions are beneficial to all. He commended the service and dedication of the Pastors, Board members, and Delegates, and called upon them to observe the ԾYear of the YouthՄ proclaimed by H.H. Catholicos Aram I and focus their efforts on bridging the youth to our church. The Prelate concluded by

wishing the representatives success in their future endeavors and service to our church.